Կարգապահական գործ թիվ 17114

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի մարտի 20-ի թիվ 77-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/56-Ա

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՐԱ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ՖԱՆՅԱՆԻՆ, ԱՆՆԱ ՋՈՒՎԱՆՈՎԱՅԻՆ, ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ, ԻՆԵՍՍԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի, Սեդրակ Ասատրյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբաններ Տիգրան Հայրապետյանին (արտոնագիր՝ թիվ 159), Արա Ղարագյոզյանին (արտոնագիր՝ թիվ 2041), Արմինե Ֆանյանին (արտոնագիր՝ թիվ 1262), Աննա Ջուվանովային (արտոնագիր՝ թիվ 550), Հրանտ Գևորգյանին (արտոնագիր՝ թիվ 440), Հարություն Բաղդասարյանին (արտոնագիր՝ թիվ 707), Ինեսսա Պետրոսյանին (արտոնագիր՝ թիվ 20), Արայիկ Պապիկյանին (արտոնագիր՝ թիվ 970), Լուսինե Սահակյանին (արտոնագիր՝ թիվ 999) (**այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Պատասխանողներ**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

30.08.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 23.08.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 23.08.2017թ. դատական նիստում Դատարանին է հանձնվել պաշտպաններ Տ. Հայրապետյանի, Ի. Պետրոսյանի, Ա. Ջուվանովայի, Ա. Պապիկյանի, Ա. Ֆանյանի, Հ. Բաղդասարյանի, Լ. Սահակյանի, Հ. Գևորգյանի և Ա. Ղարագյոզյանի միջորդությունը, համաձայն որի՝ պաշտպաններ Տ.

Հայրապետյանը, Ի. Պետրոսյանը, Ա. Ջուվանովան, Ա. Պապիկյանը, Ա. Ֆանյանը, Հ. Բաղդասարյանը, Լ. Սահակյանը, Հ. Գևորգյանը և Ա. Ղարագյոզյանը լքում են դատական նիստերի դահլիճը՝ մասնավորապես, պայմանավորված այն հանգամանքով, որ դատական կարգադրիչների կողմից անօրինական կերպով խուզարկության են ենթարկվում, ինչի կապակցությամբ էլ պաշտպաններից շատերն զրկվում են դատական նիստերի դահլիճ մուտք գործելու և պատշաճ պաշտպանություն իրականացնելու իրենց իրավունքից, Դատարանն էլ, իր հերթին, նիստերը անցկացնում է բացակայող պաշտպանների պայմաններում, երբ պարտավոր է օրենքով սահմանված կարգով հետաձգել դատական նիստերի քննությունը:

Ելնելով վերոգրյալից փաստաբանները միջնորդում են հետաձգել նիստը և ապահովել բացակայող պաշտպանների ներկայությունը: Նման պայմաններում հրաժարվում են մնալ դատական նիստերի դահլիճում և լքում են այն: Ներկայացնելով միջնորդությունը պաշտպաններ Տ. Հայրապետյանը, Ի. Պետրոսյանը, Ա. Ջուվանովան, Ա. Պապիկյանը, Ա. Ֆանյանը, Հ. Բաղդասարյանը, Լ. Սահակյանը, Հ. Գևորգյանը և Ա. Ղարագյոզյանը, առանց նախագահողի թույլտվության, լքել են դատական նիստերի դահլիճը:

Դատարանը, քննության առնելով պաշտպանության կողմից միջնորդությունը, գտել է, որ նման վարքագիծը հարկ է դիտարկել որպես անհարգալից վերաբերմունք Դատարանի նկատմամբ, մասնավորապես, այն պատճառով, որ պաշտպաններն օրենքով իրենց վերապահված իրավունքներից օգտվել են անբարեխղճորեն, ոչ պատշաճ կերպով են կատարել իրենց դատավարական պարտականությունները. մասնավորապես, առանց նախագահողի թույլտվության՝ լքել են դատական նիստերի դահլիճը, ինչով և խոչընդոտել են դատական նիստերի բնականոն ընթացքին, ինչի կապակցությամբ էլ Դատարանը գտնում է, որ պաշտպանների նկատմամբ հարկ է կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու դիմումով դիմել ՀՀ փաստաբանների պալատ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 15.09.2017թ. թիվ 298-Ա/ԿԳ-17114 որոշմամբ փաստաբաններ Տիգրան Հայրապետյանի (արտոնագիր՝ թիվ 159), Արա Ղարագյոզյանի (արտոնագիր՝ թիվ 2041), Արմինե Ֆանյանի (արտոնագիր՝ թիվ 1262), Աննա Ջուվանովայի (արտոնագիր՝ թիվ 550), Հրանտ Գևորգյանի (արտոնագիր՝ թիվ 440), Հարություն Բաղդասարյանին (արտոնագիր՝ թիվ 707), Ինեսսա Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 20), Արայիկ Պապիկյանի (արտոնագիր՝ թիվ 970), Լուսինե Սահակյանի (արտոնագիր՝ թիվ 999) նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

20.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է Պատասխանողների կողմից ներկայացրած միջնորդության պատճենը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.2. Պատասխանողների համառոտ բացատրությունները.

Պատասխանող Ինեսսա Պետրոսյանն իր 13.03.2018թ. բացատրությունում հայտնել է հետևյալը.

Իր և մյուս Պատասխանողների՝ դատական նիստերի դահլիճը եղել է ծայրահեղ քայլ՝ որպես բողոքի ակցիա այն բանի, որ նախագահող դատավորն ակնհայտ խախտում էր իրենց պաշտպանյալների և իրենց սահմանադրական և կոնվենցիոն իրավունքները: Մասնավորապես, դատարանն իրենց չէր ընդունում որպես պաշտպաններ, թույլ չէր տալիս միջնորդություններ ներկայացնել, որպիսի պայմաններում դատական նիստերի դահլիճում գտնվելը դառնում էր անիմաստ, Պատասխանողները զրկվել էին պաշտպանություն իրականացնելու հնարավորությունից և ստիպված էին դատարանի ապօրինությունը ցույց տալու համար դիմել ծայրահեղ քայլի՝ լքել նիստերի դահլիճը: Այդ մասով, Պատասխանողի տեղեկություններով, Խորհուրդն ունի կայացված որոշում: Ավելին՝ դատարանը քննության չառավ անգամ իր իսկ կողմից ներգրավված հանրային պաշտպան Արմինե Ֆանյանի միջնորդությունը ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին, որը վերաբերում էր ամբաստանյալների պաշտպանության իրավունքի հետ կապված հարցերին, մասնավորապես, եթե ամբաստանյալն ունի պաշտպան և ցանկանում է, որպեսզի հենց այդ պաշտպանն իրեն պաշտպանի, արդյո՞ք սահմանադրական է այն նորմը, որը դատավորին հնարավորություն է տալիս պաշտպան ունեցող ամբաստանյալի պաշտպանությունն իրականացնելու համար հանրային պաշտպան ներգրավել: Ըստ Պատասխանողի՝ իրենք՝ որպես փաստաբաններ, իրավապաշտպաններ և ամբաստանյալների պաշտպաններ, չէին կարող թույլ տալ, որպեսզի իրենց ներկայությամբ ու մասնակցությամբ կոպիտ ձևով խախտվեն իրենց պաշտպանյալների սահմանադրական և կոնվենցիոն իրավունքները, իրենք չէին կարող դատական նիստերի դահլիճում գտնվել ձևականորեն՝ առանց դատավարական իրավունքներից օգտվելու, առանց միջնորդություններ անելու հնարավորության, ուստի՝ հայտարարելով այդ մասին և այլ ելք չունենալով՝ Պատասխանողները լքել են նիստերի դահլիճը: Պատասխանող Ինեսսա Պետրոսյանը գտել է, որ նման իրավիճակում հարկադրված լինելով լքել դատական նիստերի դահլիճը՝ իրենք կարգապահական խախտում թույլ չեն տվել: Խնդրում է գործը քննել իր բացակայությամբ:

Պատասխանող Արմինե Ֆանյանն իր 13.18.2018թ. բացատրությունում հայտնել է հետևյալը.

23.08.2017թ. թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով հերթական դատական նիստում Պատասխանող Արմինե Ֆանյանի կողմից ներկայացվել է գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու միջնորդություն, որի քննարկումը նիստը նախագահողի կողմից մերժվեց՝ առանց որևէ պատճառաբանության: Նշված

միջնորդության քննարկման անհրաժեշտությունն ու հրատապությունն առնչվում էր ամբաստանյալի կամաարտահայտության բացակայության պայմաններում հանրային պաշտպան ներգրավելու ինստիտուտի սահմանադրականության հարցին, որի վերաբերյալ հիմնավորումները դատաքննությամբ Պատասխանող Արմինե Ֆանյանի կողմից ներկայացրել է: Ըստ Պատասխանողի՝ Դատարանն իր բոլոր գործողություններով կասեցնում էր պաշտպանների կողմից հնարավոր միջնորդություններ ներկայացնելու կամ հայտարարություններով հանդես գալու հնարավորությունը և որևէ հարթակ չէր ստեղծում մրցակցային դատավարության պայմաններում պաշտպանների կողմից իրենց դատավարական լիազորություններն իրականացնելու համար: Փոխարենը՝ Դատարանը, պաշտպանների կողմից իրենց պաշտպանյալների շահերի պաշտպանությանն ուղղված ցանկացած գործողություն կասեցնելով, թույլ չէր տալիս տվյալ դատական նիստի ընթացքում որևէ իրավաչափ գործողություն կատարել, որը բխում էր Պատասխանողների կարգավիճակից: Նիստը նախագահողի նշված անգործության դեմ առարկություններ ներկայացնելու ցանկություն հայտնած պաշտպաններին դատավոր Ա. Գաբրիելյանն այդպես էլ հնարավորություն չընձեռեց նշվածի կապակցությամբ հանդես գալ հայտարարություններով և ներկայացնել առարկություններ: Ըստ Պատասխանողի՝ Դատարանի նման վարքագիծը ոչ միայն խախտում էր Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը, այլ նաև սահմանափակում էր պաշտպանության հիմնական գործիք հանդիսացող միջնորդություններ և հայտարարություններ անելու պաշտպանների իրավունքը: Բացի այդ, նիստը նախագահող Ա. Գաբրիելյանը նիստն անցկացնում էր մի շարք պաշտպանների բացակայությամբ, այն պայմաններում, երբ նշված քրեական գործով պաշտպանների մասնակցությունը պարտադիր էր: Այդպիսով, նախագահողը պաշտպանության կողմին զրկել էր արդար դատաքննության երաշխիքներից և պաշտպանների կողմից նման ապօրինությունը դադարեցնելուն հարկադրելու միակ միջոց Պատասխանողների կողմից դիտարկվել է դատական նիստերի դահլիճը լքելը: Պատասխանող Արմինե Ֆանյանն արձանագրում է, որ նիստը նախագահողի կողմից փաստաբաններին ներկայացված լռելու պահանջն ապօրինի էր, ինչպես նաև ապօրինի էր պաշտպանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ ՔԴՕ**) 73-րդ հոդվածով նախատեսված իրենց իսկ լիազորություններից օգտվելը սահմանափակելը, այն չէր բխում թե՛ ՔԴՕ-ից և թե՛ մարդու իրավունքների հանրաճանաչ սկզբունքներից: Կարևորելով իրենց պաշտպանյալների պաշտպանության իրավունքը, ինչպես նաև օրենսդրությամբ նրանց համար նախատեսված պաշտպանության արդյունավետ միջոցները սահմանող երաշխիքները, պաշտպանության կողմը չի ենթարկվել նիստը նախագահողի ապօրինի կարգադրություններին և դուրս է եկել դահլիճից Դատարանի կողմից նշված կարևորագույն իրավունքները խախտելու հանգամանքի վրա ուշադրությունը սևեռելու և նշված ապօրինությունները դադարեցնելու նպատակով:

Խորհրդի նիստին Պատասխանողներից ներկայացել է Արմինե Ֆանյանը:

Խորհրդի նիստում Պատասխանող, հանրային պաշտպան Արմինե Ֆանյանը վերահաստատեց բացատրության մեջ նշված իր դիրքորոշումը, ինչպես նաև անդրադարձավ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործը կասեցնելու և ՀՀ սահմանադրական

դատարան դիմելու միջնորդությանը՝ նշելով, որ այն վերաբերում էր անձի կամքին հակառակ պաշտպան և, մասնավորապես, հանրային պաշտպան ներգրավելու ինստիտուտի սահմանադրականությանը, որպիսի հարցը կոնկրետ հանրային պաշտպանի գրասենյակի համար ուներ առանցքային նշանակություն, քանի որ սույն գործով դատական քննության ընթացքում իրենք մեծ դժվարություններով են անցնում: Մինչդեռ, Դատարանը, խախտելով ՔԴՕ-ի պահանջները, առանց որևէ բացատրության կամ հիմնավորման, առհասարակ չքննարկեց այդ միջնորդությունը: Արմինե Ֆանյանը նշեց, որ դատական նիստերի դահլիճը լքելը պայմանավորված է եղել իր նշված միջնորդությունը չքննարկելու հանգամանքով և նպատակ է ունեցել ուշադրություն հրավիրել դատարանի անօրինական վարքագծի նկատմամբ, և այն իր կողմից դիտարկվել է դատարանի ապօրինի գործելակերպը դադարեցնելու միակ միջոց: Պատասխանողն ընդգծել է, որ դատական նիստերի դահլիճը լքելը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ չի ունեցել:

Խորհրդի նիստը նախագահողի հարցին, թե ինչ կարծիքի է դատական նիստի ձայնագրառման կրիչի ուսումնասիրությունից պարզված այն հանգամանքին, որ դատական նիստը նախագահողը Պատասխանող Արմինե Ֆանյանի միջնորդության վերաբերյալ դիրքորոշում է հայտնել, որ այն վաղաժամ է, քանի որ միջնորդության հարուցման պահին ստուգվում էր դատավարության մասնակիցների ինքնությունը, Արմինե Ֆանյանը պատասխանեց, որ, իր հիշելով, այդ պահին միայն Կարող Եղնուկյանի ինքնությունն ստուգված չէր, որը պայմանավորված էր նրանով, որ նրա պաշտպանը մի քանի նիստի չէր ներակայացել, ապա Կարո Եղնուկյանն է պահանջել իրեն դատական նիստի չներկայացնել, քանի որ Կարո Եղնուկյանին թույլ չէր տրվում ջրի շշով դատական նիստերի դահլիճ մտնել: Բացի այդ, Դատարանը նախկինում նմանատիպ իրավիճակներում տարբերակված մոտեցում է դրսևորել, այն է՝ միջնորդությունների և հայտարարությունների մի մասը լսել և քննարկել է, մի մասը՝ ոչ: Բացի այդ, միջնորդության իրավունքը, ըստ Պատասխանողի, դատավարության մասնակիցների՝ ՔԴՕ-ով նախատեսված իրավունք է, որի կիրառման հարցում, դատավարության փուլերի հետ կապված վերապահում նախատեսված չէ:

Խորհրդի նիստը նախագահողի այն հարցին, թե զրկված էր արդյոք Պատասխանողը մինչ դատաքննությունը՝ նախապատրաստական փուլում, նշված միջնորդությունը ներկայացնելու իրավունքից, Պատասխանող Արմինե Ֆանյանը պատասխանել է, որ այդ իրավունքից զրկված չի եղել, սակայն, հաշվի առնելով խնդրի հրատապությունը, երբ ամբաստանյալներն ամեն անգամ մեծ աղմուկ էին բարձրացնում, երբ, առանց իրենց կամքը հաշվի առնելու, դատարանը հանրային պաշտպաններ էր ներգրավում ամբաստանյաներին պաշտպանելու նպատակով, և այդ հանգամանքը լուրջ բարդություններ էր ստեղծում պաշտպանների կողմից ամբաստանյալների պաշտպանությունը կազմակերպելու առումով, ուստի՝ այդ միջնորդության քննարկման կարևորությունը Պատասխանողի կողմից գերակա և հրատապ է համարվել՝ հետագայում պաշտպանյալների պաշտպանությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ուստի՝ ինքը ճիշտ է համարել հնարավորին շուտ ներկայացնել այդ միջնորդությունը:

Խորհրդի նիստը նախագահողի այն հարցին, թե Պատասխանողը հոգեբանական դժվարություն ուներ մնալու դատական նիստերի դահլիճում մինչև նշված միջնորդության ներկայացումը, Պատասխանողը պատասխանել է, որ այդ քրեական գործով ցանկացած նիստ լի է հոգեբանական լուրջ դժվարություններով՝ առաջին հերթին, ամբաստանյալների խիստ ագրեսիվ, քննադատական և առանձին դեպքերում նաև ոչ վայել վարքագծի հետևանքով, քանի որ հանրային պաշտպանները դատարանի կողմից ներգրավվել են՝ առանց ամբաստանյալների համաձայնության:

Խորհրդի նիստը նախագահողի այն հարցին, թե որ փաստաբաններն էին գտնվում դատական նիստերի դահլիճից դուրս, Պատասխանողը նշեց, որ դժվարանում է լիարժեք հիշել, սակայն, կարծես թե, Արայիկ Պապիկյանն ու Մուշեղ Շուշանյանն էին դրսում, քանի որ իրենց պայուսակներն էին զննության ենթարկվում, ինչը տեղի է ունենում յուրաքանչյուր նիստին, և փաստաբաններն ընդդիմանում էին իրենց պայուսակները բացելու՝ դատական կարգադրիչների պահանջին:

Խորհրդի նիստը նախագահողի հարցին, թե քանի նիստ է փաստաբանների բացակայության հիմքով հետաձգվել, ինչին Պատասխանողը դժվարացավ կոնկրետ պատասխան տալ, սակայն նշեց, որ երկուսից ավելի նիստ է հետաձգվել:

Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանի հարցին, թե կարող է նախադեպ դառնալ դատարանի կողմից պաշտպանի միջնորդությանը չանդրադառնալու դեպքում փաստաբանի կողմից դատական նիստերի դահլիճը լքելը, Պատասխանողը պատասխանեց, որ դատական նսիտերի դահլիճը լքելը պայմանավորված էր ոչ միայն այդ միջնորդությանը Դատարանի չանդրադառնալով, այլ, քանի որ Դատարանը չէր ապահովում մրցակցային դատավարություն, արդար դատաքննության իրավունքը և չէր ստեղծում այն հարթակը, որի պայմաններում փաստաբանն իր խոսքով և գործով կարող էր իրականացնել պաշտպանություն:

Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանի հարցին Արմինե Ֆանյանը հայտնել է, որ Պատասխանողներն նախորդիվ արդեն գրել էին հայտարությունը, և դատական նիստերի դահլիճը լքելու գործողությունը պայմանավորված չէր Լուսինե Սահակյանի հայտարարությամբ, վերջինս պարզապես ներկայացրել է իրենց հայտարարությունը:

Խորհրդի անդամ Սիմոն Բաբայանի հարցին, թե Պատասխանները դատարանի կողմից ներգրավված էին որպես պաշտպան խնդրո առարկա գործողության կատարման ժամանակ, Պատասխանողը պատասխանեց, որ, իր հիշելով, բացի Կարո Եղնուկյանի փաստաբանից, մնացած փաստաբաններն ունեին պաշտպանի կարգավիճակ:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 20.11.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն գործի նախապատրաստման ընթացքում հաստատվել է, որ Դատարանին է հանձնվել

Պատասխանողների միջնորդությունը, որից հետո վերջիններս լքել են դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահող դատավորի թույլտվության:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 23.11.2017թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 20.03.2018թ. ժամը 20:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 2017թ. օգոստոսի 23-ի հերթական դատական նիստում նախագահող դատավոր Ա. Գաբրիելյանը չի քննարկել Պատասխանող Արմինե Ֆանյանի՝ դատական նիստը կասեցնելու և անձի կամքին հակառակ նրան հանրային պաշտպան նշանակելու ինստիտուտի սահմանադրականությունը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին միջնորդությունը:
- Թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 2017թ. օգոստոսի 23-ի հերթական դատական նիստում՝ Դատարանի կողմից որոշում կայացնելու կապակցությամբ խորհրդակցական սենյակից վերադառնալուց հետո Դատարանին է հանձնվել Պատասխանողների միջնորդությունը, որից հետո Պատասխանողները լքել են դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության:

Նշված փաստերը հաստատվում է դատական նիստի ձայնագրառման կրիչով, Պատասխանողներ Ինեսսա Պետրոսյանի և Արմինե Ֆանյանի բացատրություններով, Որոշմամբ:

6. <u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար կողմից տրված տեղեկանքի համաձայն՝

Փաստաբան Հարություն Բաղդասարյանի (արտոնագիր 707, ստացված՝ 19.10.2007թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 6 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (4 ավարտված վարույթ և 2 ընթացիկ վարույթ):

Փաստաբան Հրանտ Գևորգյանի (արտոնագիր 440, ստացված՝ 29.06.2005թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 8 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (7 ավարտված վարույթ և 1 ընթացիկ վարույթ):

Փաստաբան Լուսինե Սահակյանի (արտոնագիր 999, ստացված՝ 12.11.1996թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 11 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (4 ավարտված վարույթ և 7 ընթացիկ վարույթ):

Փաստաբան Ինեսսա Պետրոսյանի (արտոնագիր 20, ստացված՝ 18.03.1999թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված և 2 ընթացիկ վարույթ):

Փաստաբան Արա Ղարագյոզյանի (արտոնագիր 2041, ստացված՝ 28.11.2015թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (2 ավարտված վարույթ և 1 ընթացիկ վարույթ):

Փաստաբան Տիգրան Հայրապետյանի (արտոնագիր 159, ստացված՝ 21.09.2005թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 8 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (3 ավարտված վարույթ և 5 ընթացիկ վարույթ):

Փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր 970, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 22 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (10 ավարտված վարույթ և 12 ընթացիկ վարույթ):

Փաստաբան Արմինե Ֆանյանի (արտոնագիր 1262, ստացված՝ 15.10.2011թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված վարույթ):

Փաստաբան Աննա Ջուվանովայի (արտոնագիր 550, ստացված՝ 20.10.2006թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված վարույթ):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

7.1 Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝*

«(…)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն

(…)»:

Նշված կանոններից հետևում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, այդպիսի վարքագիծ դրսևորած պաշտպանը խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Փաստաբանի այս երկակի կարգավիճակը բխում է Կանոնագրքի 1.1 ենթակետի պահանջներից, որի համաձայն՝ *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, դատարանի հետ փաստաբանի հարաբերությունների կանոնակարգմանն է նվիրված Կանոնագրքի 4.1 կետը, որը, լինելով բլանկետային իրավադրույթ՝ հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Սույն գործի շրջանակներում իրավական նշանակություն ունեն փաստաբանի հետևյալ դատավարական պարտականությունները՝ ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի՝ տվյալ դեպքում՝ դատարանի կանչով, ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ չլքել դատարանի դահլիճը, եթե չի հայտարարվել ընդմիջում: Սույն

պարտականությունների չկատարումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.[1]-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Դա ներառում է նաև փաստաբանի կողմից դատարանի օրինական կարգադրություններին և դատական նիստի սահմանված կարգին անշեղորեն հետևելը՝ այդպիսով դատարանի նկատմամբ ցուցաբերելով հարգանք, որպիսի պարտականությունը նրա վրա դրված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Հատկանշական է, որ նախկինում Պալատի խորհուրդը դատարանի դահլիճն առանց նախագահողի թույլտվության լքելու փաստաբանի վարքագիծը համարել է Կանոնագրքի դրույթներին հակասող: Այսպես, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան) 16.11.2009թ. թիվ 29/1-Ա որոշմամբ փաստաբան Սեդա Սաֆարյանին ենթարկել է կարգապահական պատասխանատվության, այն բանի համար, որ փաստաբանը ***«..խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը և առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, նրա արարքում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի կանոնադրության պահանջների խախտման հատկանիշներ:***»:

Խորհուրդը նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև 23.11.2012թ. թիվ 22-ԿԳ/1-Ա և 22.02.2013թ. թիվ № 7-ԿԳ/1 Ա որոշումներով:

Այս ընդհանուր մոտեցումից, Պալատի խորհուրդը նախկինում շեղվել է միայն այն դեպքերում, երբ արձանագրել է դահլիճը լքելու ծանրակշիռ պատճառներ: Այսպես՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան, զեկուցող՝ խորհրդի անդամ Արա Զոհրաբյան) 12.11.2008թ. թիվ 22/11-Ա որոշմամբ փաստաբաններ Արա Զաքարյանի, Արթուր Գրիգորյանի և Դիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել է, ըստ էության, այն հիմքով, որ՝ նշված քրեական գործով դատավորի ոչ օրինական գործողություններն այլընտրանք չեն թողել փաստաբաններին: Պալատի խորհուրդը նշել է հետևյալը՝ «..***Ինչպես կարող է դատավորը կողմերին ուղարկել որոշում, իսկ դրանից մոտ 50 օր անց, երբ համոզվելով, որ ուղարկված որոշումն իր մեջ լուրջ թերություն է պարունակել, հայտարարել, որ իր մոտ այդ նույն ամսաթվով մեկ այլ որոշում էլ կա, սակայն այլ բովանդակությամբ:.. Դատավորի գործողությունների արդյունքում խախտվում են փաստաբանության անկախության և օրինապահության սկզբունքները: Փաստաբանը ստիպված է լինում դահլիճը լքելու միջոցով առարկել դատավորի ոչ օրինական գործողությունների դեմ***:»: Պալատի խորհուրդը հայտնել է նաև հետևյալ դիրքորոշումը՝ «***Պալատի խորհուրդը միաժամանակ գտնում է, որ փաստաբանները իրավունք չունեն առանց նախագահող***

դատավորի թույլտվության լքելու դատական նիստերի դահլիճը և պարտավոր են հարգանք դրսևորել դատավորի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ: Այս մոտեցումից շեղումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն, բացառությամբ, երբ առկա կլինեն ծանրակշիռ պատճառներ:»:

Պալատի խորհուրդը Պատասխանողների՝ դահլիճը լքելու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդ վարքագծի դրսևորման պատճառները:

Սույն կարգապահական գործով Խորհուրդը հաստատված է համարում, որ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 23.08.2017թ. դատական նիստում նախագահող դատավորը չի քննարկել Պատասխանող Արմինե Ֆանյանի՝ դատական նիստը կասեցնելու և անձի կամքին հակառակ նրան հանրային պաշտպան նշանակելու ինստիտուտի սահմանադրականությունը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին միջնորդությունը, թույլ չի տվել Պատասխաններին նշված միջնորդությունը չքննարկելու վերաբերյալ, ինչպես նաև Դատարանի գործողությունների վերաբերյալ առարկություններ ներկայացնել, թույլ չի տվել Պատասխանողներին կարծիք արտահայտել:

Նման պայմաններում Խորհորդը գտնում է, որ Պատասխանողները, զրկված լինելով պաշտպանի մի շարք դատավարական իրավունքներից և իրենց պաշտպանյալների օրինական շահերը պատշաճ ներկայացնելու հնարավորությունից, ստիպված են եղել դահլիճը լքել, ուստի՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողների արարքում առկա չեն Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

7.2 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն իրավադրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, ելնելով իր իրավապաշտպան գործառույթից, պարտավոր է դրսևորել իր նշված գործառույթով պայմանավորված հասարակական հատուկ կարգավիճակին հարիր ազնիվ վարքագիծ վստահորդի հետ հարաբերություններում և առավելագույն ջանքեր գործադրել իր վստահորդի շահերը բոլոր օրինական միջոցներով պաշտպանելու ուղղությամբ:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողների կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում թույլ տալու հանգամանքը:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի

կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 15.09.2017թ. թիվ 298-Ա/ԿԳ-17114 որոշմամբ փաստաբաններ Տիգրան Հայրապետյանի (արտոնագիր՝ թիվ 159), Արա Ղարագյոզյանի (արտոնագիր՝ թիվ 2041), Արմինե Ֆանյանի (արտոնագիր՝ թիվ 1262), Աննա Ջուվանովայի (արտոնագիր՝ թիվ 550), Հրանտ Գևորգյանի (արտոնագիր՝ թիվ 440), Հարություն Բաղդասարյանին (արտոնագիր՝ թիվ 707), Ինեսսա Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 20), Արայիկ Պապիկյանի (արտոնագիր՝ թիվ 970), Լուսինե Սահակյանի (արտոնագիր՝ թիվ 999) Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հրանտ Անանյան

20 մարտի 2018թ.
թիվ ԿԳ/56-Ա
ք. Երևան